

ԼԵՐՄՈՒՆՑՈՎԻՑ

Փողոց եմ ելնում լոիկ ու մենակ.

Փայլում է խճոտ ուղին մէզի մէջ.

Աստծուն ունկնդիր դաշտը լայնարձակ,

Աստղն աստղի հետ խօսում է անվերջ:

Երկինքը մոգիչ ու խորհրդաւոր,

Լաղուր փայլի մէջ երկիրն է ննջում.

Բայց ինչու արդեօք տխուր եմ, մոլոր,

Ի՞նչն եմ ափսոսում և կամ ինչ տենչում:

Կեանքից ես ոչինչ չեմ ակնկալում,

Ո՞չ էլ ափսոսում օրերս անցած.

Ազատ ու անգորը վիճակ եմ փնտրում,

Ուզում եմ քնել՝ և ինձ մոռացած:

Բայց ոչ սառ քնով գերեզմանական.

Կուզէի յաւէտ ես այնպէս ննջել՝

Կրծքիս մէջ նիրհէր ոյժը կենսական,

Կուրծքս կարենար բարձրանալ, շնչել:

Ու գիշեր-ցերեկ մի ձայն քաղցրաւաչ

Ունկս շոյելով՝ լոկ ինձ սէր երգէր.

Եւ զլխիս վերե յաւիտեան կանաչ

Կաղնին կոացած մեղմիկ սօսափէր:

Օ. ՊԵՏՐՈՍԻԱՆ

ԱՐՑՈՒԽԵՔՆԵՐ

Սիրում եմ ձեզ, արցնենք շիթեր,  
 Մունջ յայտաբար տիրութեան,  
 Որ ջինջ, մաքուր որպէս եթեր,  
 Որպէս ցօղիկ վաղորդեան  
 Վարդը սրտիս՝ վիրապսակ,  
 Ազատում էք խորշակից. —  
 Ո՞հ, թափուեցէք կայլակ-կայլակ,  
 Մեզմացրէք իմ կսկիծ:

Վիշտս՝ կրակ, սիրտս՝ խարոյկ  
 Ծխում է լուռ ու հանդաբար.  
 Առկայժելով որպէս պատրոյգ,  
 Վաղանց՝ որպէս ակնթարթ,  
 Պիտի մարի կեանքիս կրակ՝  
 Վշտատոչոր իմ հոգին. —  
 Ո՞հ, թափուեցէք կայլակ-կայլակ,  
 Իմ արտասու՞ք զովադին:

Յ. Պետրոսին